

ԸՆԹԵՐՑՈՂԷՆ ՆՈԹԵՐ

Սիոն Ամսագրի

Պատուարժան խմբագրութեան

Այսու կը փափաքիմ Ռուբեն Սեւակի "Յիսուսի Կեանքը" յօդուածի մասին յայտնել նկատողութիւններս: Յիշեալ ուսումնասիրութիւնը հրատարակած է "Սիոն" 4-5-6 թիւերում. 1993թ:

Ռ. Սեւակ բժիշկը՝ արժեքաւոր ներդրում կատարած է Հայ Դրականութեան Գանձարանին. արժանի տեղը ունի ան "Արուեստագէտ Սերունդի" հոյլին մէջ: Սակայն "իր Յիսուսը" շատ տարբեր է հայ եկեղեցւոյ հաւատարիմ ու հաւատաւորի Յիսուսէն:

Այս յօդուածը պիտի չը գրուէր, եթէ խմբագրութեան կողմէ լուսանցքի ծանօթութիւն մը աւելցուած ըլլար. որ ըսէր. "Արտայայտուած մտքերը լոկ Ռ. Սեւակի կը պատկանին. խմբագրութիւնը զանոնք չը բաժնէր":

Սեւակի "Ուսումնասիրութեան" էջերուն ետեւ էր նշուած Լ. Թոլսթոյ կեցած են: Այս երկու մեծ մտքերը իրենց "Յիսուսը" այնքան առիւնաւոր, գեղեցիկ, պաշտելի ըլլալու աստիճան հմայիչ ու ներշնչող կերպով նկարագրած են որ ընթերցողը չը կրնար չը սիրահարուիլ իրեն. Զինք պաշտելու աստիճան:

Բայց Ան մեր Յիսուսը չէ. աւետարաններու "Որդի Մարդուն" չէ:

Ահա թէ ինչո՞ւ այդպէս է: Ըստ իրենց Յս. Բեթղեհէմ ծնած չէ: Այլ. "Նազարէթ եղաւ իր ծննդավայրը. որ յետոյ իրմով նշանաւոր պիտի ըլլար":

Արդեօք սխալա՞ծ են կամ կը կեղծեն Մարգարէն եւ Մատթէոս Աւետարանիչ երբ կը պատգամեն:

"Եւ դու, Բեթղեհէմ. երկիր Յուդայի, զի քեզմէ պիտ ելլէ ինձ իշխան, որ իմ ժողովուրդս Իսրայէլի պիտի հովուէ". (Միքիէ Ե 2. Մտք. Բ 6):

Յիսուսի քառասուն օրեր անապա-

տում ճգնութեան եւ փորձուելու մասին: "Աշակերտները իրեն (Յիսուսի) եւ իր ճգնութեան շուրջ գեղեցիկ քաջագործական զրուագներ կը հիւսեն. սատանայէն երեք անգամ փորձուելուն եւ անկից պարտուելուն մասին":

Յիսուս սատանան լոնցուց, անոր յաղթեց Ս. Գրքէն Աստուծոյ խօսքերը իրրեւ երկայրի սուր գործածելով:

Քրիստոնեաներս շատ մեծ կորուստ կ'ունենանք եթէ "հիւսուած են" Յիսուսի փորձութեան եւ հրաշքներու մասին աւետարանիչներու գրութիւնները: "Իր ամէն մէկ քայլափոխին կաղեր, կոյրեր, խուլներ, համբեր, հաշմանդամներ, դիւահարներ կը հետեւին Յիսուսի . . . ու իրենց իսկ հաւատքէն բժշկուած ետ կը դառնան ամէնքն ալ":

Յիսուսի հրաշագործ աստուածային գորութեան վարկ չեն տար. քայց կը զգոյշանան պատմել. յիշել 5000ի եւ 7000ի կերակրուիլը. ծովու վրայ քայլել:

Առիթն է որ ես յիշեմ ծիծաղելի մեկնաբանութիւնը "արդիական" կոչուած անարժեք աւետարանիչներու:

Օրինակ՝ Կանայի հարսնիքին. ջուրը գինիի փոխելու հրաշքի մասին մոտէրնիսդ-ներ կ'ըսեն: "Հարսնետոբերը այնքան շատ խմած էին որ . . . ջուրը ընտիր գինի կարծեցին": Ի մէջ այլոց յիշեմ նաեւ աշակերտի մը գլուխ գործոց շարադրութիւնը այդ մասին. -

"Ջուրը հարսանիքում իր Տէրը տեսաւ Ու ամչնալէն կարմրեցաւ":

Այս աշակերտն ալ իբր Գիշ (10+) տասը խաչ ստացաւ:

Հինգ հազարի կերակրուելուն մասին կ'ըսեն. "Յիսուս այնպէս մը ներշնչեց իր ունկնդիրները, որ իրենց անօթութիւնը մոռցան . . . ո՛չ՝ կարծեցին թէ ճաշեցին՝ յիշելով Յիսուսի խօսքը՝ "Ես եմ կեանքի հացը . . .":

Գրեթէ կ'ընդվզինք երբ երեք

(Բընան, Թոլսթոյ եւ մեր Սեւակը) կը գրեն.- "Խաչին վրայ մարդ մ'է որ կը մեռնի. Աստուած մ'է որ կը ծնի": Աւելորդ պիտի ըլլար հոս ջատագովութեան դիմել Արիոսական այս ամբարիշտ ուսուցումին դէմ:

Կարն ըլլալու համար. "Եթէ մարդն էր որ մեռաւ խաչին վրայ, վայ մեզի. փրկուած չեմք եւ ոչ ոք":

Մոլորեցնող, հաւատփէն թմբեցուցիչ ներարկող տողեր են մեր սիրելի բժիշկին արտայայտութիւնը.

"Իր (Յիսուս) միամիտ կենսագիրներու կողմէ յօրինուած են (հրաշքները Յիսուսի) շահեկան հանգամանք մը տալու համար պատմութեան . . . հրաշքներ կան որոնց վրայ աւետարանիչները համաձայն չեն, ինչպէս Ղազարոսին յարութիւնը":

Ղազարու յարութիւնը միայն Յովհ. աւետարանիչ կու տայ (ԺԱ. Գլուխ): Այդ մասին աւետարանիչներու միջեւ անհամաձայնութեան հարց գոյութիւն չունի:

Հանելի է կարդալ Սեւակի յօդուածը, իբրեւ տարբեր մօտեցում մը "իր Յիսուսին", լոկ վայելք մը ունենալ ու ընթերցանութեան. այդքան միայն:

"Մեր Սեւակը կը սիրենք, բայց աւետարանի ճշմարիտ Յիսուսը աւելի կը սիրենք":

ԲԱՐԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՋԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ Տ. ԳԱԼՈՒՍՏ ՔՀՆՅ. ԴԱՐԲԻՆԵԱՆԻ

Ընդառաջելով Եգիպտոսի Թեմի Առաջնորդ Գեորգ. Տ. Զաւէն Արք. Զինչիցեանի փափաքին, Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրը քահանայ ձեռնադրեց եւ օծեց, Ամմանաքնակ Աւետիք Դարբինեանը, ծառայելու համար Եգիպտոսի Թեմին մէջ:

Օգոստոս 13 եւ 14ին Աւետիք Դարբինեան Կիսասարկաւագ եւ Սարկաւագ ձեռնադրուեցաւ, ժառանգաւորաց Վարժարանի չորս աշակերտներու հետ, եւ քահանայի ձեռնադրութիւն եւ օծում ստացաւ Սեպտեմբեր 3 եւ 4ին, Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, ձեռամբ Ամեն. Տ. Թորգոմ Սրբազան Պատրիարքի, եւ խարտաւիլակութեամբ Լուսարարապետ Գեոր. Տ. Դաւիթ Արք. Սահակեանի, եւ Վերակոչուեցաւ Տ. Գալուստ Քահանայ: Քառասունքի առանձնացման շրջանը Տ. Գալուստ անցուց Ս. Փրկիչ վանքին մէջ

պահեցողութեամբ, ընթերցողութեամբ, եւ արարողութեանց եւ խորհուրդներու կատարման վարժութեամբ: Իր անդրանիկ Ս. Պատարագը մատոյց Հոկտեմբեր 8, Ուրբաթ առաւօտ, Սուրբ Գլխադրի մատուռին մէջ, ի ներկայութեւն Սրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր:

Նորընծայ Տ. Գալուստ Քահանայ իր ուխտի պատարագները մատոյց Բեթղեհէմի Ս. Քարայրին մէջ, Երուսաղէմի Ս. Յարութեան Տաճարի Քրիստոսի Ս. Գերեզմանի եւ Գեթսեմանի ձորին մէջ Ս. Աստուածածնայ Տաճարի Ս. Սեղանի վրայ: Եւ Հոկտեմբեր 14ին մեկնեցաւ Ամման այնտեղէն իր երէցկնոջ հետ միասին փոխադրուելու համար Գահիրէ, ուր պիտի ծառայէ իբրեւ հոգեւոր հովիւ եւ դաստիարակ, հովանիին ներքեւ Առաջնորդ Գեոր. Տ. Զաւէն Արք. Զինչիցեանի: